



**«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«25» սեպտեմբերի 2007թ. թիվ 011 արձանագրությամբ
Փոփոխությունները և լրացումները
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«12» ապրիլի 2019թ. թիվ 18 որոշմամբ

**ՓՈԽԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ԲԵՌՆԵՐԻ) ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ.....	3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ	4
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	5
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ.....	7
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	8
7. ՉՀԱՏՈՒՅՎՈՂ ԳՈՒՄԱՐ	8
8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ	8
9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՕԳՏԻՆ.....	9
10. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.....	9
11. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ	10
12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	14
13. ՎՆԱՍԻ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ).....	16
14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	16

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Փոխադրվող գույքի (բեռների) կամավոր ապահովագրության կանոնները (այսուհետ՝ Կանոններ) մշակված են "Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ իրավական ակտերի համապատասխան և ներառում են պայմաններ, որոնց համաձայն, "ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ" ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ապահովագրող) իրավաբանական և գործունակ ֆիզիկական անձանց (այսուհետև՝ Ապահովադիրներ) հետ կնքում է Փոխադրվող գույքի (բեռների) կամավոր ապահովագրության պայմանագրեր կամ ապահովագրության վկայագրեր (այսուհետև՝ Պայմանագիր):

1.2 Փոխադրվող գույքի (բեռների) կամավոր ապահովագրությունը ներառվում է "Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի "Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն" դասի մեջ:

1.3 Եթե Պայմանագիրը կնքվել է Կանոններում արտացոլված պայմանների հիման վրա, ապա, այդ պայմանները հանդիսանում են Ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի համար (այսուհետև՝ Կողմեր):

1.4 Պայմանագիրը համարվում է կնքված Կանոնների համաձայն, եթե Պայմանագրում ուղղակիորեն վկայակոչված է Կանոնների կիրառման մասին, Կանոնները հանձնվել են Ապահովադիրին և դրանց հանձնման փաստը հավաստվել է Ապահովագրության պայմանագրում՝ Ապահովադրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից այն ստանալու վերաբերյալ համապատասխան ստորագրությամբ:

1.5 Պայմանագրի կնքման ժամանակ Կողմերը կարող են պայմանավորվել Կանոնների առանձին դրույթների փոփոխման կամ չկիրառման մասին և համապատասխանաբար Պայմանագիրը կարող է բովանդակել Կանոնների դրույթներից զատ այլ դրույթներ, որոնք որոշվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և չեն հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

1.6 Փոխադրվող գույքը կամ բեռը (այսուհետև բեռ), այն գույքն է, որը նախատեսված է տարածության մեջ տեղափոխման համար:

1.7 Բեռնափոխադրումը բեռի տեղափոխումն է ցանկացած փոխադրամիջոցի օգնությամբ:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով նախատեսված որոշակի վճարի (այսուհետև՝ ապահովագրավճար) դիմաց Պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում հատուցել Ապահովադիրին կամ նրա կողմից նշված անձին, որի օգտին կնքված է Պայմանագիրը (Շահառուին), այդ պատահարի հետևանքով պատճառված վնասները:

2.2 Պայմանագիրը կնքվում է միայն այն անձի (Շահառուի) օգտին, որն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված հիմքերով փոխադրվող բեռի պահպանման և անվտանգության համար ունի ուղղակի հետաքրքրություն:

Ապահովադրի (Շահառուի) մոտ սույն կետով նշված հետաքրքրությունների և գույքային շահերի բացակայության դեպքում կնքված Պայմանագիրն առոչինչ է:

Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես բեռի մեկ (եզակի) փոխադրման, այնպես էլ մեկից ավելի փոխադրումների կամ միջանկյալ պահպանման համար (որոշակի ժամանակահատվածի համար, որը նշվում է Պայմանագրում):

2.3 Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա, որի ձևը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

2.4 Ապահովագրողը գրավոր հայտարարությունը ստանալուց հետո իրավունք ունի Ապահովադրից պահանջել՝

2.4.1 ապահովագրվող բեռի զննում իրականացնելու հնարավորության ապահովում: Այդ դեպքում Ապահովագրողն Ապահովադրի հետ համաձայնեցնում է զննում անց կացնելու հետ կապված

խնդիրները, այդ թվում զննում անց կացնելու ամսաթիվը, ժամը և տեղը, իսկ զննման արդյունքները պետք է նշվեն բեռի զննման նախապայմանագրային ակտում,

2.4.2 տրամադրել լրացուցիչ տեղեկություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և համապատասխանաբար դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա:

2.5 Ապահովագրության իրականացման փաստը հավաստվում է Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա՝ Ապահովագրողի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից ստորագրված Պայմանագիր (ապահովագրության վկայագիր) հանձնելու պահից:

2.6 Եթե Պայմանագիր կնքելիս Կողմերը պայմանավորվել են Կանոնների առանձին դրույթների փոփոխման կամ բացառման, Կանոններում շարադրված պայմաններից տարբեր այլ պայմաններով (իրավական ակտերին չհակասող) լրացման վերաբերյալ, ապա վերջինիս մասին համապատասխան նշում է կատարվում Պայմանագրում կամ դրան անբաժանելի մաս հանդիսացող կից փաստաթղթում:

2.7 Անհրաժեշտության դեպքում Պայմանագիրը կարող է կնքվել Ապահովադրի բանավոր դիմումի հիման վրա, պայմանով, որ Պայմանագրի տեքստում կընդգրկվեն ապահովագրության դիմումի մեջ ներառված բոլոր տվյալները:

2.8 Եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվում է, որ Ապահովադիրը Պայմանագրի կնքման պահին և Ապահովագրողի հարցադրումների պատասխաններում նախապես հայտնել է կեղծ կամ անարժանահավատ տվյալներ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը ճանաչել առոչինչ՝ կիրառելով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պատասխանատվության միջոցներ:

2.9 Բեռի կամ նրա մի մասի վնասվածքի դեպքում Ապահովագրողը կրում է պատասխանատվություն վնասի վերականգնման արժեքի չափով, բայց ոչ ավելի քան վնասված բեռի արժեքը:

2.10 Վտանգավոր բեռների փոխադրման (միջանկյալ պահեստավորման) ժամանակ Ապահովագրողը չի կրում պատասխանատվություն երրորդ անձանց պատճառով հնարավոր վնասի համար: Ապահովագրողը չի կրում պատասխանատվություն վտանգավոր բաղադրամասեր պարունակող բեռի խորտակման համար, եթե դրանց առկայությունը չի նախատեսվել Պայմանագրում:

2.11 Եթե որպես Ապահովադիր հանդես է գալիս բեռնափոխադրողը (առաքող կամ տրանսպորտային կազմակերպությունը), ապա Ապահովագրողի ապահովագրական պարտասխանատվության չափը չի կարող գերազանցել բեռնափոխադրողի փաստացի պատասխանատվության չափը բեռնատիրոջ նկատմամբ (վավերացված փաստաթղթերով): Պայմանագրով բեռնատիրոջ նկատմամբ բեռնափոխադրողի փաստացի պատասխանատվության չափը գերազանցող ապահովագրական գումարի մասով Պայմանագիրն առոչինչ է:

2.12 Եթե որպես Ապահովադիր հանդես է գալիս ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կրում է պատասխանատվություն բեռի միջանկյալ պահեստավորման (պահպանման) համար կնքված Պայմանագրով, ապա Ապահովագրողի ապահովագրական պատասխանատվության չափը չի կարող գերազանցել այդ անձի կամ կազմակերպության փաստացի պատասխանատվության չափը բեռնատիրոջ նկատմամբ (վավերացված փաստաթղթերով), իսկ այդ չափը գերազանցող մասով ապահովագրական գումարն առոչինչ է:

2.13 Բեռը միջանկյալ պահեստում (պահեստներում) համարվում է ապահովագրված միայն, եթե դա նախատեսված է Պայմանագրում:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1 Պայմանագրերում ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի գույքային շահերը՝ կապված ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ծովային, գետային և խողովակաշարային միջոցներով փոխադրվող բեռների տնօրինման, օգտագործման կամ տիրապետման հետ:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Ապահովագրական պատահարը պատահական դեպք է, որի հետևանքով սկիզբ է առնում Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունը:

4.2 Կախված բեռների տեսակից, փոխադրման պայմաններից, առևտրային սովորություններից և առևտրային պայմանագրերի պահանջներից բեռների կամավոր ապահովագրությունը կարող է իրականացվել հետևյալ ապահովագրական պատահարներից (ռիսկերից)՝

4.2.1 **“Բոլոր ռիսկերի համար պատասխանատվությամբ”**.

“Բոլոր ռիսկերի համար պատասխանատվությամբ” պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերի համաձայն ապահովագրական պատահարներ են համարվում ամբողջ բեռի կամ նրա մի մասի ցանկացած պատճառով տեղի ունեցած պատահական բնույթ կրող ոչնչացումը, կորուստը կամ վնասումը՝ բացառությամբ Կանոնների 4.3 կետում թվարկված դեպքերի:

4.2.2 **“Սահմանափակ պատասխանատվությամբ”**.

“Սահմանափակ պատասխանատվությամբ” պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերի համաձայն պատահարներ են համարվում ամբողջ բեռի կամ նրա մի մասի ոչնչացումը, կորուստը կամ վնասումը, որոնք արդյունք են՝

- ա) հրդեհի կամ պայթյունի,
- բ) նավի խորտակման, շուռ գալու, ծանծաղուտի վրա նստելու, ափ դուրս գցվելու,
- գ) տրանսպորտային միջոցի հետ տեղի ունեցած վթարի կամ տրանսպորտային միջոցների իրար հետ կամ անշարժ կամ շարժական առարկաներին հետ բախման,
- դ) թռչող սարքերի կամ նրանց մասերի ընկնելու,
- ե) կամուրջների, թունելների, այլ տրանսպորտային կոմունիկացիաների, պահեստների և այլ շինությունների կառույցների ավերման՝ ներառելով ամբարտակների, խողովակաշարերի և ուղեխողովակների վնասումը,
- զ) տրանսպորտային միջոցի անհայտ կորչելու (բացառությամբ ավտոմոբիլային փոխադրումների),
- է) նավի մեջ ջրի հանկարծակի ներթափանցման և դրա հետևանքով նավամբարում կամ տախտակամածի փակ բեռնարկում գտնվող բեռի խոնավացման,
- ը) բեռնման, տեղավորման, բեռնաթափման և փոխադրամիջոցի վառելիքով լցավորման ժամանակ չկանխատեսված դեպքերի հետևանքով բեռի ընկնելու (այդ թվում նավից դուրս),
- թ) ընդհանուր վթարի և փրկման աշխատանքների դեպքում բեռի գոհաբերման, հրդեհի մարման ժամանակ բեռի խոնավացման,
- ժ) լեռնային ապարների փլուզման, սողանքների, հողային մակերևույթի քանդման, ձնհալի հոսքի կամ հորդառատ անձրևի
- ծա) կայծակնահարության, երկրաշարժի, հրաբխի, ջրհեղեղի, ցունամիի, մրրիկի, փոթորկի կամ այլ տարերային աղետների:

4.2.3 **“Առանց վնասների համար պատասխանատվությամբ”**.

“Առանց վնասների համար պատասխանատվությամբ” պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերի համաձայն ապահովագրական պատահարներ են համարվում բեռի կամ նրա մի մասի ամբողջական ոչնչացումը, որոնք հետևանք են սույն Կանոնների 4.2.2 ենթակետում թվարկված դեպքերի:

4.3 4.2.1-4.2.3 ենթակետերում նշված Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերի դեպքում ապահովագրական պատահար չի համարվում բեռի կամ նրա մի մասի կործանումը, կորուստը կամ վնասումը, որն առաջացել է՝

4.3.1 ցանկացած ռազմական գործողություններից, միջոցառումներից կամ ռազմական վարժանքներից և նրանց հետևանքներից, ականներից, տորպեդներից կամ այլ ռազմամթերքների հասցված վնասներից և ավերումներից, ծովահենների գործողություններից (ծովային փոխադրման դեպքում), տեռորիստական գործողություններից (ահաբեկչությունից), քաղաքացիական պատերազմներից, ժողովրդական հուզումներից, գործադուլներից կամ նենգադուլներից (սաբոտաժից).

4.3.2 ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների, ինչպես նաև մաքսային, սանիտարական և կարանտինային ծառայությունների պահանջով բեռների բռնագրավումից, առգրավումից կամ կործանումից.

4.3.3 ատոմային էներգիայի կիրառման ցանկացած տեսակի հետ անմիջականորեն կապված միջուկային պայթյունների, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կան անուղղակի ազդեցությունից.

4.3.4 Ապահովադրի, բեռներ առաքողների, ստացողների, կամ նրանց ներկայացուցիչների դիտավորությունից.

4.3.5 Ապահովադրի, բեռներ առաքողների, ստացողների, կամ նրանց ներկայացուցիչների կողմից անգործությունից (ծովային փոխադրման դեպքում).

4.3.6 Ապահովադրի, Շահառուի, բեռնափոխադրողի կամ նրանց ներկայացուցիչների կողմից բեռնափոխադրման, բեռնման, բեռնաթափման, վերաբեռնման կամ պահեստավորման սահմանված կարգերի խախտումից.

4.3.7 Ապահովադրի կամ այլ շահագրգիռ անձանց կողմից բեռնափոխադրողի հանդեպ որևէ պարտականություն չկատարելուց, որոնց չկատարումն ազդեցություն է ունենում Ապահովագրողի կողմից ստանձնած ռիսկի մեծացման վրա.

4.3.8 առանց Ապահովագրողին տեղյակ պահելու Ապահովադրի, Շահառուի կամ նրանց ներկայացուցիչների իմացությամբ ապահովագրված բեռների հետ նույն տրանսպորտային միջոցով վտանգավոր բեռների բեռնավորումից.

4.3.9 բեռի արտաքին փաթեթավորման պահպանման, կապարների անվնասության, բեռին դիպչելուն ուղղված կամ բեռին հասցված վնասի հետքերի բացակայության պայմաններում բեռի պակասորդից կամ վնասից.

4.3.10 բեռնափոխադրման ընթացքում բեռի առանձնահատկություններից կամ բնական հատկություններից (սպառողական հատկությունների, քաշի, քանակի և ծավալի անհետացումից, կորստից, չորացումից, թափթփումից, փտումից, ուռելուց, ժանգոտումից, բեռի բնական հոսակորստից, նորմալ մաշվածքից կամ այլ նմանատիպ երևույթներից).

4.3.11 շրջակա միջավայրի կամ նավամբարային (պահեստային, ուղեբեռային-բազաժային) օդի ջերմաստիճանի ազդեցությունից, այդ թվում ջերմաստիճանային ռեժիմի խախտումից կամ սառնոցի (ռեֆրիժերատորի) մինչև 24 ժամ անընդմեջ անսարքությունից (24 ժամից ավել սառնոցի (ռեֆրիժերատորի) անսարքության կամ ջարդման հետևանքով բեռին պատճառված վնասը հատուցվում է միայն համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում և պայմանով, որ տրանսպորտային միջոցը որով տեղափոխվում է բեռը ունի համապատասխան սարքավորումներ, որոնք արձանագրում են սառնոցի (ռեֆրիժերատորի) աշխատանքը (անսարքությունը)): Սույն կետով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը պարտավոր է նաև ապահովել պայման, որ բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի անձնակազմը պարտավոր է իմանալ անսարքության փաստի մասին (մեկ ժամյա ընթացքում) և այն պահից, երբ հայտնի է դառնում սառնոցի (ռեֆրիժերատորի) անսարքության մասին, անհապաղ միջոցներ ձեռնարկել անսարքությունը վերացնելու ուղղությամբ (հատուցում ստանալու համար Ապահովադիրը պետք է ներկայացնի անսարքությունը 24 ժամվա ընթացքում վերացնելու անհնարինության մասին համապատասխան մասնագետի եզրակացությունը և համապատասխան սարքավորման միջոցով անսարքությունը հիմնավորող արձանագրության պատճեն):

4.3.12 բորբոսի, սնկերի, որդերի, կրծողների, միջատների կամ թռչունների կողմից բեռների վնասումից,

4.3.13 բեռի արտադրական թերություններից.

4.3.14 ապահովագրության ենթակա բեռները տեղափոխող նավերի, այլ տրանսպորտային միջոցների կամ կոնտեյներների անպիտանելիությունից, եթե Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչները գիտեին կամ պետք է իմանային այդ մասին բեռնավորման ավարտման պահին.

4.3.15 բեռների ոչ ճիշտ կամ թերություններով փաթեթավորումից, սահմանված նորմատիվների խախտումից, արդեն վնասված վիճակում բեռների, որոնք ենթակա չեն տեղափոխման, առաքումից.

4.3.16 տրանսպորտային միջոցի անհետ կորստից (միայն ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ)

4.3.17 երրորդ անձանց կողմից բեռի խարդախորեն յուրացումից (մասնավորապես, երբ նրանք գործում են մեկ այլ անձի անվան տակ կամ կեղծ փաստաթղթերով)։

4.3.18 բեռի պահպանման ժամանակ ցանկացած պատճառից հետևյալ մեկնակետերում՝

ա) առաքման սպասող բեռնման պահեստում.

բ) նշանակման պահեստում.

4.3.19 բեռնումից կամ բեռնաթափումից:

4.4 “Սահմանափակ պատասխանատվությամբ” և “Առանց վնասների համար պատասխանատվությամբ” պայմանների հիման վրա ապահովագրության դեպքում ապահովագրական պատահար չեն համարվում նաև բեռի կամ նրա մի մասի կործանումը (կորուստը) կամ վնասը, որն առաջացել է՝

4.4.1 տրանսպորտային միջոցի կամ բեռի քրտնումից կամ մթնոլորտային տեղումների հետևանքով խոնավացումից.

4.4.2 կեղտոտման, տարայի փչացման կամ բաղադրատոմսերի փաթեթավորման վնասի կամ կորստի հետևանքով բեռի արժեզրկումից, երբ բեռը մնում է ամբողջական.

4.4.3 տախտակամածային բեռների կամ առանց տախտակամածի նավերով տեղափոխվող բեռների նավից դուրս նետումից կամ ալիքով լվացումից.

4.4.4 բեռների կամ նրանց մասերի գողությունից, հափշտակումից կամ կողոպուտից:

4.5 Ապահովագրության լրացուցիչ պայմաններ:

Ապահովագրության լրացուցիչ պայմաններով կոնտեյներներով կամ լիխտերով տախտակամածում տեղակայված բեռները կարող են ապահովագրվել 4.2.1, 4.2.2 և 4.2.3 ենթակետերում նշված ապահովագրության պայմաններից ցանկացածով:

4.5.1 Այն բեռները, որոնք բեռնվել են տախտակամած Ապահովադրի ցանկությամբ, հանձնարարությամբ և համաձայնությամբ, կարող են ապահովագրվել միայն Սահմանափակ պատասխանատվությամբ կամ Առանց վնասների համար պատասխանատվությամբ պայմաններով, (այս դեպքում լրացուցիչ ապահովագրավճարի մուծման դեպքում բեռը կարող է ապահովագրվել նաև անկանխատեսելի պատահարների արդյունքում ալիքով լվացման, տախտակամածից դուրս ընկնելու հետևանքով ոչնչացման կամ վնասման ռիսկից):

4.5.2 Լիխտերով, լաստանավերով, լաստերով կամ այլ նմանատիպ փոխադրամիջոցներով բեռների տեղափոխման ժամանակ Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե այդպիսի նավերի օգտագործումը տեղական պայմաններում սովորական բնույթ է կրում:

4.5.3 Կենդանիների, թռչունների համաճարակների կամ նրանց հետ տեղի ունեցած դժբախտ պատահարների արդյունքում պատճառված վնասները, բեռի կորստի կամ թափթփման, ապակիների, հախճապակու, կերամիկայի, մարմարի կամ նրանցից պատրաստված իրերի ջարդումից կամ կոտրումից, ցանկացած տեսակի աղյուսի, աղացքարի, սրաքարի կամ վիմագիր քարերի, գրաֆիտային, էլեկտրոդների կամ այլ ջարդվող առարկաներին հասցված վնասները “Սահմանափակ պատասխանատվությամբ” կամ “Առանց ռիսկերի համար պատասխանատվությամբ” պայմաններով ապահովագրության դեպքում հատուցվում են միայն այն դեպքում, եթե այդ վնասները տեղի են ունեցել նավի կամ այլ տրանսպորտային միջոցի խորտակման արդյունքում:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ

5.1 **Բեռի ապահովագրական արժեք** է համարվում Պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ բեռի գտնվելու վայրում նրա իրական արժեքը: Եթե Պայմանագրով նախատեսված է, ապա բեռի ապահովագրական արժեքի մեջ ներառվում են նաև բեռի փոխադրման և միջանկյալ պահպանման հետ կապված ծախսերը:

Բեռի ապահովագրական (իրական) արժեքը՝ ներառյալ բեռի փոխադրման և միջանկյալ պահպանման հետ կապված ծախսերը, որոշվում են դրանք հավաստող փաստաթղթերի հիման վրա: Եթե փաստաթղթերով բեռի իրական արժեքը հաստատված չէ, ապա Ապահովագրողը հիմք է ընդունում բեռի շուկայական արժեքը:

5.2 Բեռների ապահովագրության դեպքում ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ և չի կարող գերազանցել բեռի ապահովագրական արժեքը (ներառյալ բեռի փոխադրման և միջանկյալ պահպանման հետ կապված ծախսերը):

5.3 Եթե Պայմանագրով բեռի ապահովագրական գումարը գերազանցում է նրա ապահովագրական արժեքը, ապա Պայմանագիրն առաջինչ է ապահովագրական արժեքը գերազանցող գումարի մասով:

5.4 Պայմանագրով կարող է ապահովագրվել նաև բեռի իրացումից ակնկալվող շահույթը: Այս դեպքում ապահովագրական գումարի չափի մասին Կողմերը պայմանավորվում են առանձին և ապահովագրական գումարի նկատմամբ նախապես համաձայնեցված ապահովագրական սակագնով:

5.5 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում բեռի ապահովագրական արժեքի որոշման համար բեռի փոխադրման ծախսերը հաշվարկվում են այն չափով, որ չափով դրանք կատարված են մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալու վայրը բեռի տեղափոխման համար:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ԶԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

6.1 Ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար նախատեսվող այն գումարը, որն Ապահովադիրը Պայմանագրի համաձայն պարտավոր է մուծել Ապահովագրողին:

6.2 Ապահովագրավճարի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարից, ապահովագրական սակագնից, չհատուցվող գումարից (ֆրանշիզայից), կարգավորիչ գործակիցներից՝ հաշվի առնելով ապահովագրության կոնկրետ պայմանները:

6.3 Ապահովագրական սակագինը ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափն է: Ապահովագրական սակագինը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից՝ կախված փոխադրվող բեռի տեսակից, տրանսպորտային միջոցի տեսակից կամ այլ տվյալներից:

6.4 Ապահովագրավճարի վճարումն Ապահովագրողին Ապահովադրի կողմից կարող է իրականացվել ինչպես կանխիկ տեսքով, այնպես էլ անկանխիկ հաշվարկներով:

6.5 Ապահովագրավճարի մուծման ժամկետ է համարվում՝

ա) կանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի ներկայացուցչի կողմից դրամական միջոցների ստացման օրը,

բ) անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման օրը:

6.6 Ապահովագրավճարի վճարումն Ապահովադրի կողմից իրականացվում է միանվագ կարգով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.7 Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

6.8 Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

6.9 Եթե ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին ապահովադրին ծանուցելու:

7. ԶՆՍՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

7.1 Պայմանագրում Կողմերը կարող են սահմանել Ապահովադրին չփոխհատուցվող վնասի չափ՝ չհատուցվող գումար:

7.2 Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ::

7.3 Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարիչափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարում է հատուցման ենթակա գումարի ամբողջ ծավալով:

7.4 Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը պակասեցվում է չհատուցվող գումարի չափով:

7.5 Ապահովագրված բեռները ջրային փոխադրամիջոցով տեղափոխելիս չեն հատուցվում բեռի ընդհանուր ապահովագրական գումարի 2%-ի չափով կրած վնասները (ոչ պայմանական չհատուցվող գումար), եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.6 Ապահովագրված բեռները ցամաքային կամ օդային փոխադրամիջոցով տեղափոխելիս չեն հատուցվում բեռի ընդհանուր ապահովագրական գումարի 1%-ի չափով կրած վնասները (ոչ պայմանական չհատուցվող գումար), եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՑ ԼՈՒԾՈՒՄԸ

8.1 Պայմանագիրը կարող է կնքվել Կողմերի կողմից համաձայնեցված ցանկացած ժակետով:

8.2 Պայմանագրի կնքման պահից Ապահովադրի մոտ առաջանում է ապահովագրավճարի (կամ պայմանագրով սահմանված դրա առաջին մասի) վճարման պարտականությունը Պայմանագրում նշված գումարի սահմաններում:

8.3 Պայմանագրով Ապահովագրողի պարտավորությունը օրենքով սահմանված կարգով ապահովագրական հատուցում վճարելու մասով ծագում է (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրում) սույն կետում նշված ժամկետներից որևէ մեկով՝ կախված այն բանից, թե նշվածներից որ ամսաթիվն է հանդիսանում ամենավերջինը՝

ա) բեռները տրանսպորտային միջոցի վրա բեռնման պահից,

բ) Պայմանագրում նշված ուժի մեջ մտնելու ամսաթվի 00:00 ժամից,

գ) ապահովագրավճարի (կամ Պայմանագրով սահմանված դրա առաջին մասի) մուծման ամսաթվին հաջորդող օրվա 00:00 ժամից:

8.4 Պայմանագրով Ապահովագրողի պարտավորությունը դադարում է (եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրում) սույն կետում նշված ժամկետներից որևէ մեկով՝ կախված այն բանից, թե նշվածներից որ ամսաթիվն է հանդիսանում ամենաառաջինը՝

ա) նշանակման վայրում բեռ ստացողի կողմից բեռի ընդունման պահից,

բ) նշանակման վայր բեռը հասնելու օրվա 24:00 ժամից,

գ) Պայմանագրում նշված գործողության ժամկետի ավարտի օրվա 24:00 ժամից:

8.5 Եթե մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը միանվագ կամ հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Ապահովագրության Պայմանագրով նախատեսվածից քիչ, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա 23.59 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23.59 ժամը:

8.6 Արդեն կնքված Պայմանագրով Ապահովագրողի պատասխանատվությունը չի ծագում, եթե՝

8.6.1 Բեռնափոխադրումը չի կայացել.

8.6.2 Պայմանագիրը կնքվել է օրենքի և այլ իրավական ակտերի խախտումով.

8.6.3 Պայմանագիրն առջինն է.

8.6.4 Բեռնափոխադրումն իրականացվում է բեռների փոխադրման համար իրավական ակտերով սահմանված իրավասություն չունեցող անձի կամ կազմակերպության կողմից (առանց

գրանցման կամ առանց հատուկ թույլտվության (արտոնագրի), այն դեպքում, երբ նման թույլտվությունը (արտոնագիրը) պարտադիր է կամ լիցենզավորման պայմանների խախտմամբ):

8.7 Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Ապահովագրողին չի ազատում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում տեղի ունեցած ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումների պարտավորությունից:

8.8 Պայմանագիրը մինչ պայմանագրում նշված գործողության ավարտը դադարում է, երբ՝

- Պայմանագրի Կողմերը Պայմանագրով միմյանց նկատմամբ սահմանված պարտավորությունները կատարել են ամբողջ ծավալով.

- Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը վերացել է՝ կապված ապահովագրական պատահարով չպայմանավորված հանգամանքների տեղի ունենալու հետ: Այս դեպքում Ապահովագրողը իրավունք ունի ապահովագրավճարի ապահովագրության ժամկետի արդեն գործողության մեջ եղած ժամկետի համապատասխան մասի նկատմամբ.

- Ապահովադիր իրավաբանական անձը լուծարվել է կամ Ապահովադիր ֆիզիկական անձը մահացել է, եթե Պայմանագրով Շահառու նախատեսված չէ,

- Պայմանագիրը դատարանի կողմից ճանաչվել է անվավեր:

8.9 Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին: Ապահովադրի պահանջով Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում, Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարն Ապահովագրողի կողմից չեն վերադարձվում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՕԳՏԻՆ

9.1 Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագիր կնքել երրորդ անձի (Շահառուի) օգտին:

9.2 Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագրում նշված Շահառուին փոխարինել այլ անձով՝ միայն այդ մասին Ապահովագրողին գրավոր իրազեկելուց հետո:

9.3 Պայմանագրից բխող որևէ պարտավորություն կատարելուց կամ Ապահովագրողից ապահովագրական հատուցում պահանջելուց հետո Ապահովադիրը Շահառուին չի կարող փոխարինել այլ անձով:

9.4 Շահառուի օգտին Պայմանագրի կնքումը Ապահովադիրին չի ազատում այդ Պայմանագրով ամրագրված իր պարտականությունների կատարումից, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ կամ Ապահովադրի վրա Պայմանագրով դրված պարտականություններն իրականացվել են Շահառուի կողմից:

9.5 Շահառուի կողմից Ապահովագրողին ապահովագրական հատուցման պահանջի ներկայացման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի Շահառուից պահանջել Պայմանագրով սահմանված պարտականությունների, ներառյալ Ապահովադրի վրա դրված, բայց վերջինիս կողմից չկատարված պարտականությունների կատարում:

10. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը կամ Շահառուն պարտավոր են անմիջապես գրավոր իրազեկել Ապահովագրողին իրենց հայտնի դարձած և Պայմանագիրը կնքելիս իրենց կողմից Ապահովագրողին տեղեկացված հանգամանքների այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա, ինչպիսիք են՝

ա) ավելի քան 3 օր անընդհատ ժամկետով բեռի ուղարկման ուշացումը.

բ) Պայմանագրով պայմանավորված փոխադրման կամ սովորական բեռնափոխադրման երթուղուց շեղումները.

գ) բեռի առաքման ձևի փոփոխումը.

դ) բեռի վերաբեռնավորման, փոխբեռնման կամ բեռի նշանակման կետերի փոփոխումը.

ե) բեռի տեղավորումը նավի տախտակամածում կամ նրանց տեղափոխումը պլատֆորմաների

վրա, եթե դա Պայմանագրով նախատեսված չի եղել.

զ) բեռն այլ տրանսպորտային միջոցի վրա վերաբեռնման դեպքում.

է) բեռի տեղափոխման և առաքման ժամկետների նշանակալի ուշացման և նման այլ դեպքերում.

ը) Պայմանագրով չնախատեսված դեպքերում և տեղերում բեռների ձևեռման դեպքում:

Ապահովադրի (Շահառուի) կողմից սույն կետում նշված պարտավորության պատշաճ իրականացման փաստը պետք է հավաստվի գրավոր ապացույցներով (անդորրագրով, ստացականով, Ապահովագրողի ֆաքսիմիլային հավաստումով կամ այլ ձևով):

10.2. Ապահովագրողը, հաշվի առնելով իրեն հայտնի դարձած ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքների առկայությունը, կարող է Ապահովադրից (Շահառուից) պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխություն կամ ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճար:

Եթե Ապահովադիրը (Շահառուն) դեմ է Պայմանագրի պայմաններում փոփոխություններ մտցնելուն կամ լրացուցիչ ապահովագրավճար մուծելուն, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծելու Պայմանագիրը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

10.3. Ապահովադրի (Շահառուի) կողմից Կանոնների 10.1 կետով նախատեսված պարտավորության չկատարման դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը և իրավական ակտերով սահմանված կարգով պահանջել Պայմանագրի լուծման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցում:

11. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ, ՎՆԱՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Ապահովադիրն (Շահառուն), այն պահից սկսած, երբ իրեն հայտնի է դարձել Պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին, պարտավոր է՝

11.1.1 Հնարավոր վնասները կանխելու և փոքրացնելու ուղղությամբ, բեռը փրկելու նպատակով ձեռք առնել ողջամիտ և հնարավոր միջոցառումներ: Այդպիսի միջոցառումների իրականացման ժամանակ Ապահովադիրը պետք է հետևի Ապահովագրողի ցուցումներին, եթե այդպիսի ցուցումներ նրան տրվել են:

11.1.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու մասին անհապաղ տեղեկացնել օրենսդրությամբ սահմանված համապատասխան իրավասու մարմիններին (այն դեպքում, երբ Ապահովադիրը նաև հանդիսանում է բեռնափոխադրող, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում):

11.1.3 Անհապաղ, տեղեկացման փաստը հավաստող ցանկացած եղանակով (իսկ վնասի հայտնաբերման պահից 24 ժամվա ընթացքում՝ գրավոր) տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին և ներկայացնել պատահարի տեղի ունենալու փաստի վերաբերյալ այդ պահին ունեցած ողջ տեղեկատվությունը (ապահովագրական դեպքի հանգամանքների և պատճառված վնասի չափի վերաբերյալ փաստաթղթեր):

Ապահովագրողին Ապահովադրի կողմից վնասի մասին տեղեկացման փաստը, ինչպես նաև Ապահովադրի կողմից բեռնափոխադրողին դեպքի կապակցությամբ ներկայացվելիք պահանջները (հայցերը) պետք է հավաստվեն գրավոր ապացույցներով (անդորրագրերով, ստացականներով և այլն):

11.1.4 Ձեռնարկել համապատասխան միջացառումներ՝ Ապահովագրողի կողմից ռեգրեսիվ հայցի ներկայացման հիմքերը պահպանելու համար, մասնավորապես դեպքի կապակցությամբ պահանջ ներկայացնել բեռնափոխադրողին:

Բեռնափոխադրողին պահանջի ներկայացման ժամկետներն ու կարգը սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

11.1.5 Սահմանված կարգով Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական հատուցում վճարելու մասին գրավոր դիմում՝ նշելով դիմումի տրման ամսաթիվը, ապահովագրական դեպքի տեղի ունենալու վերաբերյալ իրեն հայտնի բոլոր էական տեղեկությունները:

11.2 Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին 11.1 կետում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք

ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

11.3 Ապահովագրական հատուցման պահանջ ներկայացնելու դեպքում Ապահովագրողը (Շահառուն) պարտավոր է փաստաթղթորեն ապացուցել՝

11.3.1 ապահովագրված բեռի նկատմամբ իր գույքային շահերը.

11.3.2 ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը.

11.3.3 վնասի մոտավոր չափերը.

11.3.4 ապահովագրողի կողմից մեղավոր կողմի նկատմամբ ռեգրեսիվ հայցի ներկայացումն ապահովելու ուղղությամբ իր պարտականությունների պատշաճ կատարումը:

11.4 Հիմնավորող հիմնական փաստաթղթեր են համարվում՝

11.4.1 Ապահովագրված բեռի նկատմամբ գույքային շահը հիմնավորելու համար՝ նավաբեռնագիրը, երկաթուղային և օդային բեռնագրերը և այլ փոխադրական փաստաթղթերը, առք ու վաճառքի պայմանագրերը, ապրանքագրերը (ֆակտուրաներ) և հաշիվները, եթե այդ փաստաթղթերի համաձայն Ապահովագրողը (Շահառուն) իրավունք ունի տնօրինել բեռը, ֆրախտի ապահովագրության դեպքում՝ չարտեր - խմբաքանակը և նավաբեռնագիրը:

11.4.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստի ապացուցման համար՝ տրանսպորտային միջոցի տեսակից կախված ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

Օժվային փոխադրումների դեպքում՝ ծովային բողոքագիր, նավամատյանից քաղվածք, վթարային հավաստագիր, ընդհանուր վթարի վերաբերյալ դիսպաշերի ակտ և ապահովագրական պատահարի պատճառների վերաբերյալ այլ պաշտոնական փաստաթղթեր:

Նավի անհետ կորստի դեպքում՝ վերջին նավահանգստից դուրս գալու և հերթական նավահանգիստ ժամանելու սպասվելիք ամսաթվի մասին հավաստի տվյալներ:

Նավը համարվում է անհետ կորած, երբ նրա մասին ոչ մի տեղեկատվություն չի ստացվել երեք ամսվա ընթացքում, իսկ եթե տեղեկատվության ստացումը երկարաձգվել է պատերազմական գործողությունների արդյունքում՝ ապա վեց ամսվա ընթացքում:

Երկաթուղային փոխադրումների դեպքում՝ առևտրային ակտ, ընդհանուր ձևի կամ այլ ակտ, վնասի մասին նշումով երկաթուղային բեռնագիր:

Ավտոմոբիլային փոխադրումների դեպքում՝ առևտրային ակտ, գնման կամ վնասի որոշման օրենսդրությամբ սահմանված այլ ակտ, ճանապարհատրանսպորտային պատահարի վերաբերյալ Պետավտոտեսչության արձանագրությունը, գույքի առևանգման կամ դիտավորյալ ոչնչացման փաստի վերաբերյալ քրեական գործի հարուցման մասին ՀՀ Ոստիկանության կամ համապատասխան լիազորված մարմինների տեղեկանքը:

Օդային փոխադրումների դեպքում՝ տեղի ունեցած պատահարի մասին նշումով բեռնագիր, առևտրային ակտ:

11.4.3 Վնասի չափի ապացուցման և հիմնավորման համար՝ առևտրային ակտեր, Ապահովագրողի համապատասխան լիազորված ներկայացուցչի (վթարային կոմիսարի) կողմից բեռի գնման ակտեր, փորձաքննության ակտեր, գնահատումներ և նմանատիպ այլ փաստաթղթեր, որոնք կազմված են օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինների և կազմակերպությունների կողմից:

11.4.4 Պատասխանատու անձի նկատմամբ Ապահովագրողի կողմից հայցի ներկայացման ապահովմանն ուղղված Ապահովագրողի պարտավորությունների պատշաճ կատարումն հիմնավորելու համար՝ Ապահովագրողի կողմից բեռնափոխադրողին ներկայացված պահանջի պատճենը՝ բեռնափոխադրողի կողմից այդ փաստաթղթի ընդունման նշումով կամ բեռնափոխադրողին ուղարկված փոստային անդորրագրի պատճենով:

11.5 Ապահովագրական հատուցում վճարելու մասին դիմումը և դրան կից փաստաթղթերն Ապահովագրողի կողմից ստանալու փաստը հավաստվում է Ապահովագրողի համապատասխան աշխատակցի կողմից իրականացված նշումով կամ համապատասխան ստացականով:

11.6 Այն դեպքերում, երբ Ապահովագրողի մոտ անհրաժեշտություն է առաջանում Կանոնների 11.3.1-11.3.4. կետերով սահմանված հանգամանքները պարզել կամ ճշտել, ապա վերջինս իրավունք

ունի պահանջել փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական հատուցման վճարման հարցի վերջնական լուծման և վնասի չափի վերջնական ճշտման համար:

11.7 Պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

11.8 Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

11.9 Ապահովագրողն իրավունք ունի անձամբ կամ իր ներկայացուցչի նշանակման միջոցով հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները, ինչպես նաև ինքնուրույն կերպով՝ իր համապատասխան ստորաբաժանման կամ աշխատակցի միջոցով գնահատելու պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը և դա հիմք ընդունելու ապահովագրական հատուցման չափի որոշման համար:

Տարածայնությունների դեպքում Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետի կողմից: Այս դեպքում փորձաքննության ծախսերն իրականացվում են այդպիսի պահանջ ներկայացնող Կողմի հաշվին:

11.10 Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Կանոնների 11.4 կամ համապատասխան դեպքում 11.6 կետերում սահմանված փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Այդ ժամկետում Ապահովադիր (Շահառուի) կողմից Կանոններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն Ապահովադիր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Այդ ժամկետում Ապահովադիր կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

11.11 Ապահովագրողը պարտավոր է ուսումնասիրել ապահովագրական հատուցման մասին դիմումը, Ապահովադիր (Շահառուի) կողմից ներկայացված և Կանոնների 11.3 կետերով նախատեսված փաստաթղթերը:

11.12 Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոնների 11.4, իսկ համապատասխան դեպքում 11.6 կետերում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

11.13 Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադիրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովադիր (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովադիրին (Շահառուին):

11.14 Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադիրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով:

11.15 Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 10 օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

11.16 Ապահովագրական հատուցման մերժման դեպքում, եզրակացության մեջ պետք է նշվեն մերժման պատճառները:

12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1 Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը հաստատվելու դեպքում Ապահովագրողը հատուցում է Ապահովադրին՝

12.1.1 բեռի ոչնչացման, կորստի կամ վնասվելու հետևանքով առաջացած վնասները (ապահովագրության պայմաններից կախված),

12.1.2 բեռի փրկման և միջանկյալ պահպանման, բեռի վնասման արդյունքում հնարավոր ծախսերի նվազեցման և վնասի չափի որոշման համար անհրաժեշտ և նպատակային կատարված ծախսերը,

12.1.3 ընդհանուր վթարի հետևանքով առաջացած վնասները և ծախսերը (ծովային փոխադրման դեպքում),

12.1.4 նախօրոք պայմանավորված չափով բեռի իրացումից ակնկալվող շահույթը (եթե այն նախատեսված է Պայմանագրով):

12.2 Ապահովագրական հատուցման չափը որոշվում է ելնելով ապահովագրական գումարից, ապահովագրական արժեքից, չհատուցվող գումարից և Կանոնների 11.4.3. կետում թվարկված փաստաթղթերից:

12.3 Բեռի ամբողջական ոչնչացման կամ կորստի դեպքում Կանոնների 12.1.1 կետով սահմանված կարգով ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրում նշված ապահովագրական գումարի չափով՝ մասհանելով ոչ պայմանական չհատուցվող գումարը:

Բեռի մի մասի ոչնչացման կամ կորստի դեպքում Կանոնների 12.1.1 կետով սահմանված կարգով ապահովագրական հատուցման չափը որոշվում է ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնական չափով՝ ամբողջ բեռի արժեքի և բեռի վնասված մասի արժեքի հարաբերության համամասնությամբ:

12.4. Բեռի վնասվելու դեպքում Կանոնների 12.1.1 կետով սահմանված կարգով ապահովագրական հատուցման չափը որոշվում է Կանոնների 11.4.3. կետում նշված փաստաթղթերին համապատասխան, որոնք որոշում են բեռի վնասի չափը (կամ անկախ փորձաքննության արդյունքներով)՝ բեռի ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի համամասնությամբ:

12.5. Բեռի հետ տրանսպորտային միջոցի անհայտ կորելու դեպքում (բացառությամբ ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ) ապահովագրական գումարը վճարվում է ապահովագրական գումարի չափով մասհանած՝ ոչ պայմանական չհատուցվող գումարը:

12.6. Բեռի փրկմանը, վնասների կանխմանն ու փոքրացմանն ուղղված Ապահովադրի ծախսերը Ապահովագրողի կողմից հատուցվում են, եթե այդ ծախսերը եղել են արդյունավետ, հիմնավոր, իսկամիտ և նպատակային:

12.7. Ապահովագրողը կատարում է ապահովագրական հատուցում միայն ապահովագրական գումարի սահմաններում, անկախ այն բանից, որ վնասների չափերը կարող են գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, իսկ Կանոնների 12.1.2-12.1.3 կետերով սահմանված կարգով Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսերը չեն կարող գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի 2 %-ը:

12.8. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու օրը պարզվում է, որ տվյալ բեռը ապահովագրված է նաև մեկ այլ ապահովագրողի կամ ապահովագրողների կողմից համանման ապահովագրական պատահարներից և համընդհանուր ապահովագրական գումարը գերազանցում է բեռի փաստացի ապահովագրական արժեքը, ապա Ապահովագրողն ապահովագրական հատուցում վճարում է հատուցման ենթակա գումարի այն մասի չափով, որը համամասնական է տվյալ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի և Ապահովադրի կողմից այլ Ապահովագրողների հետ կնքված Պայմանագրերով սահմանված ապահովագրական գումարների հանրագումարի հարաբերությանը:

12.9. Ծովային բեռնափոխադրումների դեպքում ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամանակ Ապահովագրողն իրավունք ունի լրիվ ապահովագրական գումարի վճարման ճանապարհով ազատվել Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարումից: Սակայն իր այդ իրավունքից օգտվելու մտադրության մասին Ապահովագրողը պարտավոր է տեղեկացնել Ապահովադիրին՝ վերջինիս կողմից ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին տեղեկացման օրվանից սկսած 7 օրվա ընթացքում:

12.10. Եթե ապահովագրական հատուցում կատարելուց հետո բեռը հայտնաբերվել է, ապա Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է վերցնելով իր բեռը Ապահովագրողին հետ վերադարձնել վճարված ապահովագրական հատուցումը՝ մասհանելով մասնակի վնասի փոխհատուցումը, եթե այդպիսի վնաս ապահովագրված բեռին պատճառվել է:

12.11. Եթե Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական պատահարի կապակցությամբ վնասների հատուցում է ստացել երրորդ անձանց կողմից, ապա Ապահովագրողն հատուցումն իրականացնում է միայն Պայմանագրով նախատեսված հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանց կողմից փոխհատուցված գումարի տարբերության մասով:

Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին երրորդ անձանց կողմից այդպիսի փոխհատուցման ստացման մասին:

12.12 Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից կամ դրամարկղից սահմանված կարգով դրամական միջոցների դուրս գրման օրը:

12.13 Ապահովագրողն ազատվում է այն վնասների հատուցման պատասխանատվությունից, որոնք առաջացել են Ապահովադիրի կողմից հնարավոր վնասների փոքրացման կամ վերացման նպատակով խելամիտ և հասանելի միջոցառումներ գիտակցաբար չձեռնարկելու հետևանքով:

12.14. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում վճարելուց, եթե Ապահովադիրը (Շահառուն)՝

ա) կեղծել է վնասի ծագման հանգամանքների կամ նրա չափերի վերաբերյալ փաստաթղթերը.

բ) հրաժարվել է վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովագրողի (շահառուի) մեղքով:

12.15 Կանոնների համաձայն չեն հատուցվում Ապահովադիրի (Շահառուի) կողմից իրականացված ցանկացած անուղղակի այն ծախսերը, որոնք կատարվել են օրինակ՝ բեռի առաքման կամ տեղ հասցնելու համար սահմանված ժամկետների ուշացման, փոխադրվող բեռի գնի փոփոխության և այլ նմանատիպ պատճառների արդյունքում (բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի վնասները ենթակա են հատուցման ընդհանուր վթարի հետևանքով ծախսերի հատուցման կարգի համաձայն):

12.16 Ապահովագրողն իրավունք ունի հետաձգել ապահովագրական հատուցման վճարման կամ մերժման մասին եզրակացության ընդունումը, եթե՝

ա) ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած վնասի չափի ճշգրտման նպատակով Ապահովադիրի նախաձեռնությամբ նշանակվել է լրացուցիչ փորձաքննություն: Այդ դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Կանոններում նշված ժամկետին համապատասխան՝ Ապահովագրողի կողմից լրացուցիչ գնման արդյունքները բովանդակող փաստաթղթերի ստացման օրվանից սկսված:

բ) Ապահովադիրի (Շահառուի) կամ նրանց ներկայացուցիչների նկատմամբ Ապահովագրական պատահարի փաստի առթիվ հարուցված է քրեական գործ: Այդ դեպքում ապահովագրական հատուցումը կարող է վճարվել Կանոններում նշված ժամկետին համապատասխան՝ դատական մարմինների որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսված:

12.17 Եթե ապահովագրական պատահարը հանցագործության հետևանք է և 18 ամիս հանցագործությունը մնում է չբացահայտված, ապա նշված ժամկետից հետո Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում չի վճարվում:

12.18 Եթե բեռ ստացողն այն ստանալու պահին գրավոր կերպով փոխադրողին չի տեղեկացնում բեռի պակասի կամ վնասվածքի մասին, ապա համարվում է, որ նա բեռը ստացել է փոխադրման պայմանագրի պայմաններին համաձայն:

13. ՎՆԱՍԻ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

13.1 Ապահովագրական հատուցում վճարելուց հետո հատուցված գումարի սահմաններում Ապահովագրողին են անցնում Ապահովադրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի Ապահովագրողի կողմից հատուցված վնասի պատճառման համար պատասխանատու անձի, այդ թվում Բեռնափոխադրողի նկատմամբ:

13.2 Այն դեպքում եթե բեռնափոխադրողը հանդիսանում է միևնույն ժամանակ ապահովադիր կամ շահառու և/կամ Ապահովագրողի ապահովագրական գործակալ, ապա բեռնափոխադրողների նկատմամբ վնասի հատուցման պահանջ է ներկայացվում այն ապահովագրական պատահարների դեպքում, երբ՝

- բեռնափոխադրողի վարորդը ապահովագրված բեռը տեղափոխելիս դեպքի պահին եղել է ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ,
- բեռնափոխադրողի վարորդը ապահովագրված բեռը տեղափոխելիս դեպքի պահին չի ունեցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք (ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունքի լիազորագիր կամ ուղեգիր կամ համապատասխան կարգի վարորդական իրավունք),
- պատահարը տեղի է ունեցել վարորդի դիտավորյալ գործողությունների արդյունքում:

13.3 Ապահովագրողին փոխանցված պահանջի իրավունքն իրականացվում է Ապահովադրի (Շահառուի) և պատճառված վնասի համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

13.4 Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել նրան բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են վերջինիս փոխանցված ետ պահանջի իրավունքն իրականացնելու համար:

13.5 Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ ապահովագրական հատուցումը արդեն վճարված լինելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Շահառուից) ետ վերադարձնելու ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարները:

14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

14.1 Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

14.2 Վիճելի հարցերի լուծման ժամանակ Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

14.3 Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ “Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին” ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատարաններում: